

19144

ԱՐԱՆՈՎ

ՈՏԱՐԵՐԿՐՅԱ

ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ

ՄԻՔԱՆԻ ՆԵՆԳ ՊՐԻՈՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

327.8

16-89

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, «ԲՈԼԵՏԵՎԻԴՐ» ★ 1987

ԳՐՈՒԵՑԱՐՆԵՐ ԹՈԼՈՅ ՑՆՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՎ

27 SEP 2006

327.8

Ա. ՊԵՐԱՏՈՎ

ԴԻ-96

15 JAN 2010

ՈՏԱՐԵՐԿՐՅԱ

ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ

ՄԻՔԱՆԻ ՆԵՆԳ ՊՐԻՈՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԱԶՈՎ-ՍԵՎՏՈՎԱՆ ՅԵՐԿՐՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ «ԳՈԼԾԵՎԻԿ»
ԴՈՒՏՈՎ - ԴՈՆ — 1937

19144

27 AUG 2013

Լրտեսությունը, վասարաբությունը, պի-
վերսիան փորձված միջոցներ են բուրժուական
պետությունների գինանոցում։ Այդ միջոցներն
ոգտագործվում են վոչ միայն հավանական հա-
կառակորդների, այլև այսպես կոչվող բարեկամա-
կան պետությունների դեմ պայքարելու համար։

Իրենց լրտեսներին ուղարկելով մեզ մոտ,
ձգտելով իրենց մարդկանց նստեցնել կարեորա-
գույն տեղամասերում, մեր թշնամիները չեն
սահմանափակվում զբանով։ Նրանք գործադրում
են նաև բոլոր ջանքերը, վորպեսզի իրենց լրտե-
սական ցանցի մեջ առնեն նաև Խորհրդային
Միության բաղաքացիներից վոչ լիարժեք և ան-
կայուն տարրերին։ ձգտում են խճճել նրանց
իրենց լրտեսական վուտայնով, նրանց հրում են
հայրենիքի դափաճանության ուղին, գործելով
շանտաժով, կաշառքով, խարեբայությամբ, սպառ-
նալիքներով, նրանց ստիպում են ծառայել Խորհր-
դային Միության թշնամիների գործին։ Անհրա-
ժեշտ ե հիշել, վոր լրտեսը, դիվերսանտը, վաս-
սարարը վտանգավոր ե նրանով, վոր «իր» մար-
դու դիմակի տակ թագնվելով՝ նա սողոսկում ե
մեր շարքերը, ոգտագործում ե մեր անհոգու-



1010
43/089

41687 · 68

թյունն ու զյուրահավատությունը, վորպեսպի, կատարելով իր տերերի հրամանը, մեզ հարկածի թիկունքից, կործանի բազմաթիվ խորհրդային ժարդանց, առաջ բերի դժբախտություններ ու աղետներ և հեշտացնի թշնամու համար հաղթանակ ձեռք բերելլ:

Թշնամու համար նրա աշխատանքը դժվարացնելու, թույլ չտալու, վոր բայց անի մեր պետական գաղտնիքը և մնաս հասցնի մեր պաշտպանուսակությանն ու սոցիալիստական շինարարությանը, մենք պարտավոր ենք սննդաժեշտ յեզրակցությունների հանել մեր ստացած դասերից, մենք պետք ե պայքար հայտարարենք զյուրահավատությանը, անհոգությանը, վորոնք անցքեր են հանդիսանում թշնամիների սողոսկման համար: Մենք պետք ե բանանք այն նենգամիտ և վոլորապտույտ ուղիները, վորոնցից ոգտվելով՝ ոտարերկրյա հետախուզությունները հաճախ իրենց ցանցն են գցում հաճախ վոչ վատ մարդկանց, վորոնք չեն ցանկանում դառնալ իրենց հայրենիքի դավաճաններ, բայց կառնում են լրտեսներ՝ միայն շնորհիվ զգաստության բացակայության և այն բանի, վոր բարյացակամության ու կեղծափորության դիմակի տակ թագնված թշնամուն ու նրա ստոր դիտափորությունը տարբերել չեն կարողանում:

Ոտարերկրյա հետախուզությունները ձգտում են զանազան յեղանակներով ոտար տերիտորիա-

ներն ուղարկելիրենց լրտեսների պատրաստված կադրերին: Այդ կադրերը մանրամասն նախապատրաստություն են անցնում իրենց յերկրներում և ուղարկում են հետախուզությանը հետաքրքրող յերկիրը՝ լրտեսական աշխատանք կատարելու համար:

Համաշխարհակին պատերազմի շրջանից մեզ հայտնի յեղեաքը, յերբ անգլիական գործակալ «ԴՆ—27.ը», վորն ավարտել եր գործակալության դպրոցը Դեվոնշիրում, դեռ նախքան պատերազմը սողոսկում ե Գերմանիա, այնտեղ վորպես կամավոր մտնում գերմանական բանակը և շուտով բարձրացվում ե լեյտենանտի աստիճանի: Կատարելապես տիրապետելով գերմաներն, անգլերեն ու ֆրանսերեն լեզուներին, նա փոխադրվում ե Բավարական պրինց Ռուպրեխտի—Լիլլի մոտ գործող Բավարական կորպուսի հրամանատարի—շտաբը: «ԴՆ—27»-ն ամբողջ պատերազմի ընթացքում գրագրություն ուներ անգլիական հետախուզության հետ: Նույնիսկ 1918 թվականին, յերբ գերմանական հետախուզությանը հաջողվում ե ստանալ դաշնակիցների հետախուզության գործականիքի ցուցակները, այդ սպային, վորն այն ժամանակ արդեն գերմանացիների մոտ գնդի հրամանատար եր, նորանք չկարողացան հայտաբերել: Նա ինքն իրեն մերկացրեց Սպայում, վորտեղ ուղարկվել եր վորպես գերմանական պատվիրակ, հաշտության մասին բանակցություններ վարելու և վորտեղ նա բացելրաց միացավ անգլիական պատվիրակությանը:

Ալլ յերկիրներ լրտեաներ ուղարկելու պրակտիկան, խնդիր տալով նրանց ամուր հաստատվել համապատասխան պետության որդանիգմի մեջ, կիրառվում ե բոլոր ոտարերկրյա հետախուզությունների կողմից: Միաժամանակ աշխատանք ե տարիվում հարեան յերկրի քաղաքացիների ուսումնասիրման ուղղությամբ, նպատակ ունենալով հայտաբերել բոլոր նրանց, ովքեր կարող են այս կամ այն պատրվակով, այս կամ այն մեթոդով ներգրավվել լրտեսական աշխատանքի մեջ: Հայտնի յե, փոք Գերմանիայից գուրս գալութույլտվություն ստացող համարյա բոլոր անձինք պարտավոր են նախապես ներկայանալ նացիոնալ-սոցիալիստական կուսակցության արտաքինս-քաղաքական բաժինը, փորտեղ նրանց գերակշռող մեծամասնությունը հետախուզական առաջա-դրանքներ ե ստանում, ինչպես նաև ցուցումներ այն մարդկանց ուսումնասիրելու մասին, վորոնց հետ նրանք առիթ կունենան հանդիպելու արտա-սահմանում:

Նույնպիսի կարգ գոյություն ունի նաև ձա-պոնիայում: Ուսարերկրյա քաղաքացիների ուսում-նասիրությունը հետօնուզության կողմից կա-տարվում ե միայն մեկ տեսանյօւնով — թե ինչ-պես կարելի յե նրանց ավելի նաջողությամբ ներգրավել հետախուզիչ-լրտեսական աշխատանքի մեջ: Ինչպես և պատերազմից առաջ, գերմանա-կան հետախուզությունը մշակել ե մի հատուկ քարտատուփ, վորը բաժանվում ե ըստ այն մարդ-կանց բնակության քաղաքների, աշխատանքի-

ճյուղերի, անհատական հատկանիշների, վորոնք նախատեսվում են լրտեսական ցանցի մեջ ներ-գրավելու համար *:

Լրտեսության «թեկնածուների», շատ հաճախ լրտեսական շահուածի ակամա զոհերի այդ ցուցակիները կազմվում են ըստ զանազան հատկանիշների, առաջին հերթին, ինարկե, նկատի յեն առնվում քաղաքականապես անկայուն, տատան-մող տարրերը, այնուհետև ամեն տեսակ թուլու-թյան ու պակասության տեր մարդիկ, վորոնք հակումն ունեն հարբեցողության, այլասերման, վորոնք աչքի յեն ընկել գեղի պետական միջոց-ներն ունեցած անազնիվ վերաբերմունքով, վորոնք վատնումներ են կատարում և այն:

Իրենց տրամադրության տակ ունենալով այս կամ այն չափով վարկաբեկված մարդկանց այդ-պիսի մի ցուցակ, ուսարերկրյա հետախուզու-թյուններն ոգտվում են այդ մարդկանց արտա-սահման մեկնելուց՝ նրանց լրտեսական աշխա-տանքի մեջ ներգրավելու համար: Իրենց յերկրում բնակվող մարդկանց հավաքագրման համար ու-ղարկվում են հասուկ հավաքագրող գործակալ-

* Մինչև պատերազմը գերմանական հետախուզությունն իր տրամադրության տակ ուներ Ռուսաստանի, Անգլիայի ու Ֆրան-սիայի 47 հազար քաղաքացիների վերաբերյալ նյութեր պարու-նակող քարտատուփ: Այդ մարդիկ ուղեկրի եյին հանդիսանում լրտեսական աշխատանքը մեջներգավելու համար: Այդ մարդկանց հավաքագրման համար, նայած նրանց անձնական հատկություններին, ոգտագործում եյին շահնտափի, կաշառման, սպառնալիքի, պրոֆիլացիայի բազմապիսի յեղանակներ:

Ներ: Խորհրդային Միություն ուղարկվող լրտես-
ներն անցնում են մանրամասն նախապատրաս-
տություն: Նրանց կատարելագործում են լեզուն
իմանալու մեջ, հարկադրում են կարգալ տեղա-
կան խորհրդային մամուլը, նայած թե վորտեղ ե
ուղարկվում լրտեսը, սովորեցնում են ռադիո-
գործը, ստիպում են ամեն որ, նախապատրաս-
տության պրոցեսում, լսել խորհրդային ռադիո-
հաղորդումներ: Լեհական հետախուզության մեջ,
որինակ, ԽՍՀՄ աշխատանքի ուղարկվելու պատ-
րաստվող բոլոր լրտեսների համար գոյություն-
ունեն հատուկ «հանձնարարական մինիմում ցու-
ցակներ» այն գրականության, փորը լրտեսը
պետք ե պարտադիր կերպով կարգության մեջ կարողանա-
մեկնարանել խորհրդային քննադատության վո-
գով: Այդ ցուցակների մեջ մտնում են այնպիսի
զրգեր, ինչպես, որինակ՝ «Հերկված խոպան»-ը,
«Չափայեց»-ը, «Բրուսկին», «Ինչպես եր կոփ-
վում պողպատը»: Վերջին ժամանակներս լեհա-
կան հետախույզներին նաև հարկադրում են ու-
սումնասիրել Խորհրդային նոր Մանմանադրու-
թյունը, կուսակցության պատմությունը, ստա-
խանովյան շարժման վերաբերյալ նյութերը:
Նրանցից պահանջվում է խորհրդային տերմինո-
գիայից ոգտվելու հմտություն:

Այդ յեղանակով պատրաստված լրտես-հավա-
քագրողներն ուսարերկրյա առւրիստսերի, տրան-
զիտային ուղերձների անվան տակ ուղարկվում
են ԽՍՀՄ, կամ թե պարզապես անլեզալ կերպով
անցկացվում Խորհրդային Միություն, խնդիր

ունենալով մարդիկ հավաքագրել իրենց լրտեսա-
կան աշխատանքի համար:

Կապիտալիստական յերկրներից մեզ սոտ
ուղարկված յուրաքանչյուր լրտես ձգտում ե
շուտով ակլիմատիզացիայի յենթարկվել խորհր-
դային պայմաններում, նմանվել խորհրդային
մարդու, տեղափորիվել աշխատանքի: Դա առանձ-
նապես հեշտանում է մեզ մոտ գործազրկության
կատարյալ բացակայությամբ: Լրտեսը ձգտում
ե սոլոսկել գործարան, մտնել խորհրդային հիմ-
նարկությունը, ծանոթություն հաստատել այն-
տեղ, տեսնել թե ում և ինչպես կարելի յեքանել
իր ցանցը: Այդ նպատակով լրտեսն իրեն ապա-
հովում ե կեղծ կամ գողացած անցագրով, յեր-
բեմն նույնիսկ կուսակցական տոմսով, ամեն
տեսակ տեղեկանքներով ու հանձնարարականնե-
րով: Իրեն լեզարիզացիայի յենթարկելու համար
լրտեսը կանգ չի առնում վոչ մի միջոցի առջև:
Նա, որինակ, սկսում ե վորոնել դյուրահավատ
կանանց կամ թե գործարանում հայտնի ստա-
խանովական աղջիկների՝ հին կադրային բանվար-
ների ընտանիքներից, այն նպատակով, վոր խնա-
միանալով նրանց հետ, միանգամից հենց մտնի
գործարանում հայտնի ու ամուր միջավայրը, վոր-
պես «այսինչի ամուսինը», «այսինչի փեսան կամ
ազգականը»: Լրտեսական խնդիրներ կատարելու
համար բոլոր միջոցներն ել լավ են—և՝ «ակտի-
վությունը» հասարակական կյանքում, և՝ «ստա-
խանովյան աշխատանքը», և ստորաքարշությունը,
և հաճոյակատարությունը, և՝ շողոքորթություն-

նը և, վերջապես, անվերջ «ամուսնություններն» ու «ապահարզանները»՝ ավելի հարմար գույք փորոնելու նպատակով:

Այսէիսով, ոգտվելով զգաստության բժացումից կամ նրա լիակատար բացակայությունից, թշնամին սողոսկում ե մեր շարքերը, դառնում ե ումերը մարդը: Հիմնավորվելով ձեռնարկության կամ հիմնարկության մեջ, լրտեսն սկսում ե աստիճանաբար հավաքագրական աշխատանք ծափակել մեր յերկրի մարդկանց մեջ, ձգտելով նրանց դարձնել հայրենիքի դափանաներ և ստիպել աշխատելու ոտարերկրյա հետախուզության ոգտին:

Ինչպես ցույց տվին վերջին դատավարությունները, տրոցկիստները, զինովյեվականները և աջ թափթափուկները—ժողովրդի թշնամիներն արագորեն արձագանքեցին ֆաշիստական բանակում գտնվող իրենց տերերի կոչին և փոչ թե ահից դրդված, այլ խղճի մասոք ջանում ելին աշխատել ձապոնագերմանական ֆաշիզմի համար: Տրոցկիստական-ճապոնա-գերմանական գործակալության դատավարությունը ցույց տվեց, վոր այդ կեղտու դափանաները—տրոցկիստները, մնապարաները, լրտեսները, զիվերսանտները նույնպիսի յեռանդով տերեր ելին վորոնում ֆաշիստական հետախուզությունների մեջ, ինչպես վերջիններս վորոնում ելին տրոցկիստներին, վորպես իրենց գործակալների:

Ավելի դժվար ե լրտեսական աշխատանքի համար այնպիսի մարդկանց հավաքագրելը, վորոնք

փոչ մի ընդհանուր բան չունեն տրոցկիստ դավաճանների հետ: Այդպիսի՝ սնցյալում ազնիվ մարդկանց ֆաշիստական հետախուզությունները բաց չեն թողնում իրենց ուշադրության դաշտից և ոգտագործելով ամեն տեսակ կեղտու մեթոդներ, ձգտում են նրանց ներգրավել իրենց լրտեսական աշխատանքի մեջ, զփոթելով նրանց միտքը նյութական ու բարոյական տեսակետից, գործադրելով շանտաժի ու վախեցնելու մեթոդներ:

Յեթե լրտեսը պատրաստի մարդիկ չի գտնում վիրավորված, քաղաքականապես անկայուն, կամազուրկ, շաղակրատ և արատավոր մարդկանց մեջ, նա իր համար զոհեր ե նշում և արհեստականորեն վերջիններիս մեջ զարգացնում ե այն, ինչ նրան անհրաժեշտ ե—վիրավորանք, դժգոհություն, արատներ, իսկ յերբեմն ել զիտավորյալ կերպով վարկաբեկում ե նրանց՝ ըրջապատողների աշըռում:

Որինակ, հայտնի յեն դեպքեր, յերբ ոտարերկրյա հետախուզության կողմից ընտրված մարդու հասցեյով ուղարկում են հակախորհրդային թուցիկ, այնուհետև ուշադիր հետեւմ են, թե ինչպես կարձագանքի թուցիկն ստացողը: Յեթե նա հականեղափոխական թուցիկ ստանալու մասին վոչ-վոքի չի հայտնում, այդ մասին իրազեկ չի դարձնում կուսակցական կամ խորհրդային որդաններին, նույնիսկ վոչնչացնում ե թուցիկը, ապա վորոշ ժամանակից հետո նրան ներկայանում ե լրտես-հավաքագրողը, աշխատանքի հակելով նրան հօգուտ ոտարերկրյա

հետախուզության։ Յերբ քաղաքացին սկսում է
փրդովիել իրեն այդպիսի առաջարկ անելու հա-
մար, սպանում և հայտնել իշխանություններին,
լրտես։ հավաքագրողը առանարյուն կերպով կո-
սկցնում է այդ, մատնանշելով հակախորհրդային
թառցիկն ստանալու ու թագնելու փաստը,
մատնանշելով, վոր այդ փաստը հեշտությամբ
կարելի յե ապացուցել նամակաբերի միջոցով
և այն։ Առաջին անգամ համաձայնություն չտա-
նալով, լրտեսը չի հանգստանում։ Վորոշ ժա-
մանակից հետո նա նորից վերագանում և նույն
մարդու մոտ, այժմ արդեն վախեցնելով այն
բանով, վոր տվյալ քաղաքացին առաջին անգամ
նրան չի հանձնել իշխանություններին։ Լրտեսը
պահանջում է միայն նվազագույն, համարյա վոչ
գաղտնի տեղեկություններ, վորոնք իբր թե
նրան չափազանց կարենը են, դրամ և առաջար-
կում, խոստանում է այդ տվյալներն ստանալուց
հետո այլևս չձանձրացնել նրան։ Իսկ այնուհետեւ
առեն ինչ ընթանում է ըստ նախատեսվածի, —
առաջին անգամ «խոսքի յեկողը» ընկնում և
ճահճուտը, վորի միջից նա այլևս չի կարող
գուրս գալ, վորպես արդեն ապականված, և խա-
ղատիկնիկ և գառնում ճարպիկ լրտեսի ձեռքում։

Վորպեսզի ավելի մոտ և մտերմական կապ
հաստատեն հավաքագրման համար ընտրված
մարդկանց հետ, լրտեսները զանգան միջոցներ
են կիրառում։ Հաճախ, յերբ տնտեսվարը գոր-
ծուղվում է մի տեղ կամ կուրորտ ե գնում, վա-
գոնում նրան «Ճանաչում ե» անակնկնալ այդ

հանդիպումից ուրախացած հավաքագրողը, վորը
«բանից դուրս ե գալիս, վոր ընդհանուր ծանոթ-
ներ ունի» և այն։ Յերկարածե ուղեվորության
ժամանակ հավաքագրողն ամեն կողմից տնտղում
է իր զոհին, գտնում է նրա թույլ կողմերը և
սկսում է հյուսել իր սարդոստայնը, նույն
նպատակով ոգտագործում են նաև կուրորտային
հանդիպումները, ուր ջատ և աղատ ժամանակը,
ուր զբոսանքի հնարավորություններ կան, ուր
ագիլի հեշտությամբ մտերմանում են՝ մանավանդ
հետաքրքրական և պատրաստակամ մարդկանց
հետ, վորոնք առաջին հայացքից կասկածանքի
տեղիք չեն տալիս։

Հայտնի յեն մի շարք դեպքեր, յերբ լրտես-հա-
վաքագրողները միամիտ մարդկանց սարքովի կին
եյին տալիս։ Այդ կանայք «զգուշորեն» սկսում
են ուժեղ հետաքրքրություն ցուցաբերել զեպի
իրենց ամուսինների աշխատանքը, իմանալ նրանց
պաշտօնեական զաղտնիքները։ Բավականաշափ
նյութեր ստանալով «ամուսնուն» քաղաքակա-
նապես վարկաբեկելու համար, այդպիսի կինը
բաց և անում խաղաթղթերը, բացեիրաց առա-
ջարկելով նրան ուղղակի լավ վարձատրվող ծա-
ռայության անցնել «իր» հետախուզության մոտ։
Բոլոր մարդիկ չե, վոր բավականաշափ արիու-
թյուն են գտել այդպիսի զրությունից ազնվորեն
դուրս գալու համար։ Յեվ այդ բանից ել հենց
ոգտվում են լրտեսները, իրենց անդիտակից ու
անհոգ զոհին դարձնելով իր հայրենիքի դավա-
ճան ու մատնիչ։

Մինչդեռ իրականում յուրաքանչյուր ազնիվ խորհրդային քաղաքացի լիակատար հնարավորություն ունի հեռացնելու իրենից լրտեսական կեղտու դավերը, ազատվելու իրեն սարդոստայնի մեջ խճճողներից, ոգուտ բերելու իր հայրենիքին, մերկացնելով աներեսաբար իրեն հետապնդող լրտեսներին։ Դրա համար հարկավոր ե միայն հասկանալ, վոր ամեն մի սխալ կամ զանցանք՝ նույնիսկ ծանր հանցագործություն խօստովանելու, այն չթագցնելու, խորհրդային իշխանության որգաններին այդ մասին իրազեկ դարձնելու դեպում հանդիսանում ե ավելի պակաս չափով ծանր հանցանք, քան թե գաղտնի համաձայնությունը հայրենիքի թշնամու հետ և լրտեսական առաջադրանքներ կատարելը։

Պետք ե միշտ աչքի առաջ ունենալ, վոր ոտարերկրյա հետախուզության հետ համաձայնության գալու ուղու վրա կանգնած մարդն այլևս յերբեք իր գլխի տերը չի, նրան աստիճանաբար, անմեղ հանձնարարություններից սկսելով, հարկադրում են նախ լրտես դասնալ, ապա պահանջում են անտրասունջ կերպով դիվերսիաներ ու տեսորիստական ակտեր կատարել։ Բավական ե, վոր մեկը մի մատը տա լրտեսի ձեռքը, ել այնուհետև նա կոտից-զլուխ կզավթի իր գոհին և նախին ազնիվ մարդուն դավաճան ու մարդապան կդարձնի։

Այսպես պատահեց, որինակ, լրտես-տրոցկիստների վերջին դատավարության վճռով դատապարտական յերիտասարդ ինժեներ Ստրոյիլովի

հետ։ Այդ մարդուն դաստիարակել եր խորհրդային իշխանությունը, ուսում եր տվել նրան, դարձրել մասնագետ։ Ընկնելով լրտեսների ձեռքը, նա աստիճանաբար դարձավ հայրենիքի դավաճան, վնասարար ու դիվերսանտ։ Սկզբում Ստրոյիլովին — այն ժամանակ, յերբ նա գործուղման մեջ եր գտնվում Գերմանիայում — գերմանական լրտեսները կարդալու տվին Տրոցկու գիրքը, այնուհետև սկսեցին հրամցնել հականեղափոխական այլ գրականություն, և վերջացրին նրանով, վոր սկսեցին շանտաժի յենթարկել նրան, սպառնալով հանձնել խորհրդային իշխանությունների ձեռքը, ոգտագործելով նաև այնպիսի մի առիթ, թե հենց միայն Ստրոյիլովի մերձնենալը գերմանական լրտես Բերգի նման տիպերի հետ, արդեն բավականաչափ վարկաբեկում ե նրան։ Ստրոյիլովը, փոխանակ ազնվորեն բացահայտելու գերմանական լրտեսների այդ մեքենայությունները և դրանով իսկ վրեկելու իրեն նրանց հետապնդումներից, գերադասեց լուսթյան մատնել իր զանցանքները և՝ իրեն խորհրդային իշխանությանը չհանձնելու խօստման գնով՝ գերմանական հետախուզությանն ստորագրություն տվեց նրան հետաքրքրող տեղեկություններ տալու մասին, այդպիսով վոտով-գլխով ընկնելով Գեստապոյի ձանկը։ Յերբ Ստրոյիլովը վերադարձավ հայրենիք, նրան արգեն հանգիստ չելին թողնում և հարկադրեցին զբաղվել վնասարարությամբ ու դիվերսիայով։ Այդ պիտով Գեստապոյն կամուրջ գցեց լրտես Ստրոյիլովի և Կուզբասում ու այլ տրոցկիստական



գործակալների միջև։ Մինչդեռ բոլորի համար պարզ ե, վոր Ստրոյիլովը կարող եր վոչ միայն խուսափել մատնիչ-շափինսի ու դիվերսանտի իր անարդ վիճակից, այլև կարող եր, ժամանակին բացահայտելով Գեստապոյի գործակալների ստորինտները, ոգուտ բերել իր հայրենիքին և մնալ նրա հավատարիմ զավակը։

Յեթե մեր խորհրդային տերիտորիայում լըրտեսները հարկադրված են գործել մեծագույն զգուշությամբ, խուսափելով ձախողումներից և մեր խորհրդային ու կուսակցական հասարակայնության և Ներքգործողկոմատի որդանների կողմից մերկացվելուց, ապա իրենց Փաշիստական հայրենիքում, այնտեղ գնացած խորհրդային քաղաքացիների վերաբերմամբ, նրանք իրենց պահում են ցինիկ կերպով ու համարձակ։ Արդեն Լեհաստանի կամ Գերմանիայի տերիտորիայով անցնելու ժամանակ զնացըների մեջ խորհրդային քաղաքացիների մոտ նստեցվում են այնպիսի ուղեկիցներ, վորոնք ձգտում են ամեն կերպ շոշափել ուղեկիցներին և ամեն առիթ ոգտագործել՝ նրանց իրենց ցանցի մեջ ներգրավելու համար։

Կյանքից վերցված մի շարք գեպքեր ցույց են տալիս, թե վորքան զգաստ պետք ել լինեն գործով արտասահման մեկնող մեր ինժեներները, տնտեսվարներն ու այլ անձինք, ոտարերկրյա լրտեսության ճարպկորեն դասավորված ցանցի մեջ չընկնելու համար։

Խորհրդային մի աշխատող — «Լ-ն», արտասահման գնալով վորոշում ե ոտար լեզու ուսում-

նասիրել։ Նա հայտարարություն ե տալիս թերթում, վոր ուսուցիչ ե վիստոռում։ Նրա ստացած բազմաթիվ նամակների թվում կար մի նամակ, վորի մեջ սրտառուչ խոսքերով պատմվում եր հեղինակի նյութական ծանր դրության մասին, այսինքն, թե ինչ-վոր մի ուսուցչուհի, վորը յերեք հոգուց բաղկացած ընտանիքի կերպակողն ե հանդիսանում, խնդրում ե վերջնական պատասխան չտալ մյուս ուսուցիչներին, մինչև վոր անձնական խոսակցության միջոցով չհամոզվի, վոր լեզուն իմանալու և դասավանդման մեթոդի տեսակետից տվյալ ուսուցչուհին նախապատվառթյուն ե վայելում մյուս բոլոր ուսուցիչների համեմատությամբ։ «Լ-ն» ամուրի յեր, ընկերների շրջանում հայտնի յեր վորպես լավ կուսակցական, հասարակական աշխատող, կենցաղային հարցերում համեստ մարդ։ Նրա աշխատանքի բնագավառը թեև տեխնիկական եր, բայց չափազանց պատասխանատու, քանի վոր աշխատանքի բնույթի հետևանքով նրան հայտնի ելին շատ կարևոր պետական զաղանիքներ։ «Լ-ն» համաձայնությամբ ե պատասխանում նամակին և խնդրում ե «կարիքավոր» ուսուցչուհուն անցնել իր մոտ, բանակցությունների համար։ Նշանակված ժամին ներկայանում ե 26 տարեկան գեղեցիկ յերիտասարդ աղջիկ, վորն իրեն տնվանում ե Մերի և առաջին իսկ զրուցից «Լ-ին» դրութում իր համեստ արտաքինով ու հուզում իր ծանր նյութական դրության մասին պատմածով։

Սկսված դասերը տեղի եյին ունենում «Լ.ի»
քնակարանում և միքանի ամսա ընթանում եյին
նորմալ կերպով։ Այդ ժամանակամիջոցում «Լ.ն»
մտերմանում եիր ուսուցչուհու հետ, նրանք սկսում
են միասին զբոսանքներ կատարել բաղաքից
դուրս, կինո գնալ և այլն։ Հարաբերությունները
գնալով դառնում են ավելի ու ավելի մտերմա-
կան։ Համատեղ պարապմունքների ընթացքում
Մերին վոչ մի անգամ չեր տալիս վորեւ այն-
պիսի հարց, վորը կարողանար կասկած առաջաց-
նել։ Քաղաքականության հարցերից նա քիչ եր
հասկանում, թեև ասում եր, թե մորից թագուն,
վորը մոլեռանդ կերպով հավատացող մի կի՞ն ե,
ու ազքեր ե կարդում Խորհրդային Միության
մասին ե, յեթե նա ավելի շատ ազատ ժամանակ
ունենար, անկասկած կրաժաներ բոլշեվիկների հա-
յացքները։ Մի անգամ յերեկոյան, սովորական
դասի ժամանակ, Մերին հանկարծ իրեն վատ ե
զգում։ Նա խնդրում ե թժիշկ հրավիրել, մատնա-
նշելով իր հեռափոր ազգական «Ն.ին»։ Թժշկի
գալու պահին Մերին ավելի յե վատանում, ան-
հրաժեշտ ե լինում նրան պառկեցնել դիվանի վրա։
Եեկած բժիշկն արձանագրում ե ուժեղ հոգնա-
ծություն և սրտի գործունեյության թուլացում։
Թժշկը դեղափոշի յե տալիս և ասում, վոր նա
շուտով կհանգստանա ու կքնի, «Լ.ին» առաջար-
կում ե չանհանգստացնել Մերիին, թուլլ տալ
նրան հանգիստ պառկել, և գնում ե։ Անցնում է
միքանի ժամ, Մերին չի արթնանում, և յերբ
մոտենում ե զիշերվա ժամը Յ.ը, «Լ.ն» մտածում

ե, վոր յե այժմ նա նույնիսկ արթնանա ել,
այս ժամին արդեն անհարմար ե նրան դուրս
թողնել բնակարանից։ Հոգնած «Լ.ն» շուտով ինքն
ել ե ընում։ Առավոտյան արթնանայով, «Լ.ն»
մեծ զարմանքով տեսնում ե, վոր Մերին վոչ զի-
վանի վրա յե և վոչ ել ամբողջ բնակարանում։
«Լ.ի» զարմանքն ել ավելի յե ուժեղանում,
յերբ նա չի զտնում իր բնակարանի վոչ զլխա-
վոր դռան և վոչ ել հետնամուտքի բանալիները։
Բանալիներն անհայտացել եյին, և վորքան ել
«Լ.ն» վարոնում ե, վոչ մի տեղ չի կարողանում
գտնել։ Նա ստիպված ե լինում հեռախոսով փա-
կանագործ կանչել՝ դուս փակը կոտրելու համար։
Փոխանակ անմիջապես գնալու իր ընկերների
մոտ և պատմելու կատարվածի մասին, «Լ.ն»
փախենում ե թե չինի վորեւ մեկը կարծի, վոր
գեպքն այնպես չի յեղել, ինչպես նա պատմում
ե, վոր նրա և Մերիի մեջ կատարվել ե վորեւ
մի բան, վոր վոչ վոք չի հավատա բանալիների
անհայտանալու պատմությանը և վոր ամբողջ
կատարվածի հետեանքով նրա մասին կսկսեն խո-
սել, շուռ կտան փաստերը և կարող են այնպիսի
խոսակցություններ սկսվել, վորոնցից անախոր-
ժություններից բացի վոչինչ սպասել չի կարելի։
«Պետք ե լոել — վորոշում ե «Լ.ն», — չե վոր բացի
ինձանից վոչ վոք վոչինչ չգիտե»։ Մինչդեռ բանն
այն եր, վոր «Լ.ն» անգամ չեր ել կասկածում,
վոր հակահետախուզությունը, վորի գործական
ե յեղել Մերին, իր ամբողջ պլանները կառուցել
ե հենց այն հոգեբանական մուենտի վրա, վոր

«Լ.ն» կվախենա վորևե մեկին պատմել Մերիի՝
իր բնակարանում գիշերելու, բանալիների ան-
հայտանալու և գուռը կոտրելու մասին:

Յերբ արդեն անցել եր վորոշ ժամանակ և
«Լ.ն» սկսել եր մոռացության տալ կատարված
զեպքը, մի անգամ յերեկոյան նրա բնակարանն
ե գալիս սի անծանօթ մարդ և իրեն ներկայաց-
նելով տեղական հականետախուզության գործա-
կալ, ասում ե, վոր հականետախուզության շեֆի
կողմից հանձնարարություն ունի հանգիպելու-
նրա հետ և խոսելու նրա և Մերիի միջև տեղի
ունեցած գեպքի մասին: Գործակալի ասելով,
Մերին դիմում ե տվել հականետախուզությանը,
թե իր աշակերտը—արտասահմանում գտնվող
այսինչ խորհրդային հիմնարկի աշխատակիցը,—
վորի հետ յերկար ամիսներ նա պարապելիս ե
յեղել և վորը բարեկիրթ ե պահելիս յեղել
իրեն, վերջին դասի ժամանակ թեյ ե առաջար-
կում նրան՝ հրուշակով: Ուտելու ժամանակ նա
գլխապտույտ ե զգում: «Լ.ն» բժիշկ ե հրավիրում,
վորը նրան տալիս ե փոշիներ: Փոշիներից հետո
նա իրեն զգում ե մի փոքր թեթև և քնում ե:
Գիշերը նա անսպասելի կերպով արթնանում ե
ինչ վոր ծանրությունից և ֆիզիկական ուժեղ
ցավից: Ուշքի գալով՝ նա իր դիվանի վրա տես-
նում ե «Լ.ին», վորն իր թե փորձելիս ե յեղել
բռնաբարել նրան, ըստ վորում իր փորձերը նա
զուգակցել ե սաղիստական տանջանքների հետ և
կծոտել ե նրան առնվազն 15 տեղից: Կարճ դիմա-
դրությունից հետո նրան հաջողվում ե պոկ գալ

«Լ.ի» ձեռքից և փախչել հարկան սենյակը: Սակայն
այստեղ ևս «Լ.ն» համնում ե նրա հետեւց և պայքա-
րը նրանց միջև վերսկսվում է: Անելաների ըռպելին
Մերին վերցնում ե սեղանի վրա գրված լիքը աղա-
մանը և լցնում «Լ.ի» աչքերի մեջ: Վախենալով, վոր
«Լ.ն» խելակորույս վիճակում կհետապնդի իրեն,
Մերին գուրս ե փախչում և փակում բնակարանի
գլխավոր դուռը ու հետնամուռաքը: Մերին իր դի-
մումին կցել ե բանալիների կապոցը և «Ն»
բժշկի վկայականը, վորը հրավիրված ե յեղել
«Լ.ի» բնակարանը և վորը հաստատում ե, թե
իրը «Լ.ն» նրան համոզել ե տուն չտանել Մե-
րիին, ասելով, վոր ավելի լավ կլինի թողնել իր
բնակարանում ե, վոր հաջորդ որը Մերին ներկայա-
ցել ե իրեն ուժեղ ջղային վիճակում, և նրա
մարմնի վրա հայտաբերվել են 15 կծվածքներ՝
արյան հետքերով:

Գործակալին լսելով, «Լ.ն» արդեն ընկնում ե
հիպնոսացածի վիճակի մեջ, այլևս չի կարողա-
նում հավաքել իր մտքերը: Մեկ բան նա սկսում
ե պարզ հասկանալ, այն, վոր ինքը գտնվում ե
անգունդի յեղին և ամբողջապես իրեն անծա-
նոթ այդ մարդու իշխանության տակ: Նա կլան-
վում ե իրեն ֆրկելու մտքով, չհասկանալով
տակայն, վոր միակ ուղին այն ե, վոր ինքը գնա-
կ ամեն ինչ պատմի իր մոտիկ ընկերներին, վոր
այլ վճիռը կնշանակի անխուսափելի կործանում:
Հականետախուզության պլանը մշակված եր ուշի-
ուշով: «Լ.ի» ներգրավումը նշված եր այնպես,

վոր հականետախուզությունը, — վորը հորինել
եր այդ ամբողջ գործը, — հոգեբանորեն «Լ» ին
ներկայանար վոչ թե նրա խեղդողի գերում,
այլ փրկողի գերում, վորպես մեկը, վորը կյանքի
դժվար ըոպեցին ոգնության ե յեկել նրան, ուս-
տի հականետախուզությունից յեկած այդպիսի
լավ մարդկանց կարելի յե մատուցել վորոց
«մանը» ծառայություններ:

Փորձակալը մատնանշում ե, թե հականետա-
խուզությունը շահագրգուփած չե նրան վարկա-
բեկելու և խայտառակելու մեջ քանի վոր խոսքը
վերաբերում ե վոչ թե մի շարքային մարդու,
այլ այն յերկրի պատասխանատու աշխատակցին,
վորի հետ իր կառավարությունը գտնվում ե
զիվանագիտական նորմալ հարաբերությունների
մեջ: Բայց քանի վոր դիմումն ստացվել ե, հա-
կանետախուզությունը պարտավոր ե քննությունն
կատարել և գործը հանձնել դատախազին: Այդ
գործով իրենք արգեն կանչել են Մերիին, հար-
ցաքննել և իրենց նախաձեռնությամբ նրան
առաջարկել են աղմուկ չբարձրացնել ու գործը
վերջացնել խաղաղ ճանապարհով: Մերիին յերկար
ժամանակ չի համաձայնել, բայց հականետախու-
զության ճնշման տակ տվել ե իր համաձայնու-
թյունը, պայմանով, վոր հինգ որվա ընթացքում
ստանա հինգ հազար վոսկի ուուբլի: «Լ»-ն ըսկդ-
րում չի համաձայնում, ապա համաձայնում ե
փոքր գումար վճարել, բայց գործակալը հայտա-
րաբուժ ե, թե ինքը լիազորված չե այդպիսի
քանակցություններ վարելու: Հաջորդ որերում

«Լ»-ն հանդիպում ե գործակալին, ապացու-
ցում նրան, վոր ինքը գրամ չունի և ձարել ել
չի կարող: Յերրորդ որը «Լ»-ին տեսակցության
ե գալիս մի ոտարերկրացի, վորն իրեն անվանում
ե հականետախուզության պետի ոգնական: Նա
հականետախուզության «Լ»-ին, վոր պատրաստ ե ոգնելնրան
բանկից գրամ ձեռք բերելու, սակայն այդ ծա-
ռայության փոխարեն հույս ունի «Լ»-ից վորեւե
փոխատուցում ստանալու: Հականետախուզությունը
շատ բան չի պահանջում, նա շահագր-
գուփած ե, վոր յերկրում խաղաղություն և կարգ
ու կանոն լինի: Մինչդեռ նրան բազմաթիվ զա-
նազան մատնություններ են հաղորդվում: Հա-
ճախ դժվար ե լինում ճշմարտությունը տարբե-
րել կեզծիքից: Աւստի հականետախուզությունը
խնդրում ե միայն, վոր «Լ»-ն իր յեզրակացու-
թյունն ու կարծիքը հայտնի հականետախուզու-
թյանը հետաքրքրող անձնավորությունների մա-
սին:

«Լ»-ն շատ ավելի վատ բան եր սպասում:
Այդ պահանջը նրան թվում ե անմեղ: Նա նույն-
իսկ սկսում ե համոզել իրեն, վոր ինքը շատ
լավ գործ ե կատարում—խորհրդային մարդկանց
կազմակի Խորհրդային Միության թշնամիների
հնարավոր զրաբարառություններից: Դարձյալ մեկ
քայլ, և «Լ»-ն կանգնած կլիներ հայրենքի գա-
վաճանության կործանիչ ուղու վրա:

Սակայն թշնամուն չհաջողվեց տոնել իր
հաղթանակը: «Լ»-ի արտաքին վարքագիծն ան-
նկատելի չմնաց նրա աշխատանքի ընկերների

կողմից։ Լուրեր եյին հասել դուռը կոտրելու
պատմության մասին, նրանք նկատում եյին, վոր
«Լ»-ն խուրափում եւ ընկերներից, յերեկոները
կորչում եւ հայտնի չե թե ուր, հարցերին սուս
պատասխան եւ տալիս։ Ուշազրություն եր զրա-
փում նաև այն հանգամանքը, վոր «Լ»-ն յեռան-
դով սկսել եր վաճառքի հանել իր վորոշ իրերը,
փորձում եր զրամ պարտք վերցնելու վորոշում
և ընկերաբար խոսել նրա հետ, և «Լ»-ն վերջին
մոմենտին արիություն եւ գտնում պատմելու ամ-
բողջ տեղի ունեցածը։

Մենք զիտմամբ մտնրամասն կանգ առանք
այս որինակի վրա, ցույց տալու համար, թե
ինչպես զգաստության բացակայությունը, թվում
ե թե այնպիսի մի հասարակ հարցում, ինչպի-
սին ե ոտարերկրյա լեզվի դասատուի ընտրու-
թյունը, իրեն հանգստացնելը, թե թշնամին այն-
քան ել նենգ չե, ինչպես նկարագրում են, փոք-
րոգությունը և հայրենիքի հանդեպ ունեցած
պարտքի զիտակցման բացակայությունը, մինչ
այդ ազնիվ, վոչնչով չարտահագործած մի քաղա-
քացու, ինչպիսին եր առաջ «Լ»-ն, զցեցին մեր
հայրենիքի ամենափոխերիմ թշնամու ճանկը, մի
թշնամի, փորն իրբեվ կանոն միշտ սկսում ե մանր
ծառայություններ մատուցելու խնդիրքից, այն
հաշվով, վոր հետազում հարկադրի կատարելու
սպանություններ, հրկիզումներ և լրտեսություն։

Հայտնի յեն նաև մի շարք այլ գեպեր, յերբ
թշնամին, ոգտվելով արտասահմանյան գործուղ-
ման մեկնած վորոշ խորհրդային քաղաքացիների

ցովությունից, կանայք և հայթայթել նրանց,
իսկ այնուհետեւ ստիպել ու գոնացում տալ հրա-
պարակ յեկած «վիրավորված ամուսնուն» և,
իբրև հաստոցում այն բանի, վոր գործը կոծկվել
ե ու չի հասցվել խայտառակության, դյուրա-
հավատ ու ցոփ մարդկանց զրդել և լրտեսու-
թյան, հայրենիքի դավաճանության։ Մի խորհր-
դային քաղաքացու, անցյալում կարծեք թե ան-
բասիր մի մարդու հետ պատահում ե այսպիսի
մի դժբախտություն, յերբ նա գործուղման մեջ եր
գտնվում ձապոնիայում։ Նա սկսում ե հաճախակի
այցելել ուստորաններ և այլ զվարճատեղեր ու
մոտիկություն ե հաստատում այդպիսի վայրեր
հաճախող արտաքուստ «արիստոկրատունի», բա-
վականաչափ գեղեցիկ մի կնոջ հետ։ Շքեղ կա-
հավորված ուստորանի անդորր անկյունում այդ
կնոջ հետ ունեցած հանդիպումներից մեկի ժա-
մանակ անսպասելի կերպով հանդես ե գալիս
զինվորական համազգեստով մի ճապոնացի, իրեն
անվանում ե այդ կնոջ ամուսինը և հարձակվում
խորհրդային քաղաքացու վրա, բավարարությունն
պահանջելով իր ընտանեկան ոջախի պատիվն ար-
ատավորելու համար։ Բանը խայտառակությամբ
կվերջնարդ, յեթե հենց այդտեղ յերեվան չգար
մի այլ մարդ, արտաքուստ բավական սիրալիք,
նույնպես ճապոնացի, բայց քաղաքացիական հա-
գուստով։ Վերջինս սկսում ե զինվորական ճա-
պոնացուն համոզել, վոր աղմուկ չբարձրացնի և
գործը վերջացնի հաշտությամբ։ Խորհրդային
քաղաքացին, վորն իրեն զգում եր հուսահատ

դրության մեջ, կառչում եւ «հաշտեցնողին», վորպես փրկության խարիսխի: Բանը վերջանում ե «հաշտությամբ», բայց ինչ գնով: Խորհրդալին քաղաքացին ստորագրություն ե տալիս «հաշտեցնողին»՝ «ինֆորմացիա» տալու ԽՍՀՄ-ում կատարվող վորոշ գործերի մասին, վորոնը հետաքրքում ելին «հաշտեցնողին», վորը բանից դուրս ե զալիս՝ ճապոնական հետախուզության դործակալ եր: Բայց ստորագրություն տալով, արդ խորհրդային քաղաքացին ընկնում ե «հաշտեցնողի» ճանկը: Վախենալով «հաշտեցնողի» կողմից մերկացվելուց, նա գնալով ավելի ու ավելի յեխանում, կատարելով նորանոր լրտեսական հանձնարարություններ: Նա դառնում ե ճապոնական լրտես և իր հայրենիքի թշնամին:

Հայտնի յեմի այլ դեպք, յերբ խորհրդային միքաղաքացի — «Ն», արտասահմանում գործուղման մեջ յեղած ժամանակ, ընկնում ե ոտարերկյա հականետախուզության հարվածի տակ, հետեյալ պարագաներում: Մի անգամ «Ն»-ն պորտֆելը ձեռքին մտնում ե կաֆե: Բանի վոր պորտֆելի մեջ գործարար թղթեր չկային, «Ն»-ն միքանի բաժակ սուրճ խմելուց հետո պորտֆելը թողնում ե սեղանի վրա և գնում հեռախոսով խոսելու: Յերբ նա վերադառնում ե իր սեղանի մոտ, պորտֆելը գտնում ե իր տեղում և միքիչ ժամանակ նստելուց հետո քայլերն ուղղում ե դեպի դուրը: Կաֆեյից դուրս գալու ժամանակ նրան կանգնեցնում ե ոտարերկյացի մի յերիտասարդ, վորը դիմում ե «Ն»-ին

հետեյալ հարցով. «Դուք եք այսինչը»: «Ն»-ն դրական պատասխան ե տալիս: Այն ժամանակ ոտարերկյացին «Ն»-ին խնդրում ե անցնել մի կողմ և հաղորդում ե նրան՝ «Դուք, պարոն «Ն», խորհրդային լրտես եք, վոր խախտում եք տվյալ պետության որենքները: Այդ մասին վոստիկանությանը դեռ հայտնի չե, բայց դուք ամբողջապես գտնվում եք իմ ձեռքում: Յես կարող եմ ձեզ փրկել, յեթե դուք ինձ վորոշ «Ճառայություն» մատուցեք: Յերբ հուզված «Ն»-ն սկըսում ե ժիւտել իր վրա բարդվող զրաբարտությունը, ոտարերկյացին խնդրում ե նրան չտարանալ, քանի վոր «Ն»-ն խուսափել չի կարողանա, նկատի ունենալով, վոր նրա պորտֆելի մեջ կա մի լրտեսական փաստություղթ, ուղղված տվյալ յերկրի դեմ: «Ն»-ն գիտեր, վոր իր պորտֆելի մեջ գատապարտելի վոչինչ չի կարող լինել, ուստի տեղնուտեղը բաց ե անում պորտֆելը, սակայն վորքան մեծ ե լինում նրա սարսափը, յերբ պորտֆելի մեջ իր զանազան թղթերի արանքում գտնում ե ոտարերկյա լեզվով գրված գաղտնի մակագրությամբ մի փաստաթուղթ, վորն ամենայն հավանականությամբ պորտֆելի մեջ ելին խցկել այն ժամանակ, յերբ ինքը խոսում եր հեռախոսով: Յերբ «Ն»-ն սկըսում ե հուզվել՝ անձանոթին մեղաղելով, վոր նա յեայդ փաստաթուղթը խցկել իր պորտֆելի մեջ, անձանոթ մարդը պատասխանում ե՝ «Հանգստացեք, պարոն «Ն», յես չզիտեմ, թե դուք ինչպես կկարողանաք դուրս գալ այս դըությունից

Յես մտադրություն ունեյի փրկելու ձեզ, իսկ
յիթե դուք այդ բանից խուսափում եք, յես ան-
միջապես, հենց այս ըովեյիս, ձեզ կհանձնեմ
տեղական վոստիկանության ձեռքը: Կարծ ասած
«Ն»-ն փոխանակ տեղնուտեղը վերջ դնելու
այդ խոսակցություններին և լինելով ազնիվ,
անբիծ մարդ, փոխանակ անմիջապես ինքը դի-
մելու վոստիկանությանը, սկսում ե կոչպրոմիս-
ներ վորոնել անծանոթ մարդու հետ և ի վերջո
«խայտառակությունից խուսափելու» նպատա-
կով համաձայնում և տեղեկություններ տալ
Խորհրդային Միության մեջ բնակվող մի մար-
դու մասին: Բայց «Ն»-ին իր սարդոստայնի
մեջ խճած լրտեսը գրանով չի սահմանափակ-
վում: Նա չի ցանկանում «Ն»-ին բաց թողնել
իր ձեռքից՝ առանց գրափոր հաստատում ստա-
նալու տրված հանձնարարությունը կատարելու
համաձայնության մասին: Վորովինեաւ «Ն»-ն
ուրիշ վոչ մի յելք չեր տեսնում իրեն հետապն-
դող լրանսից ազատվելու համար, նա ճակատա-
գրական սխալ ե կատարում ու վերջինիս ստո-
րագրություն տալիս, պարտավորվելով կատարել
իրեն արված հանձնարարությունը. իսկ այդ
ստորագրությունը ճակատագրական հանդիսա-
ցավ «Ն»-ի համար նրա ամբողջ կյանքում: Ոգտը-
վելով այդ ստորագրությունից և սպառնալով
հրապարակել այն, ֆաշիստական հետախուզու-
թյան գործակաները նրան բռնում ելին ամե-
նուրեք, ուր ել լիներ նա, և առաջին հայացքից
անմեղ բնույթի հանձնարարություններից անց-

նելով այլ հանձնարարությունների, «Ն»-ին
«բեռնավորում են» իսկական լրտեսական աշխա-
տանքով, նբան ստիպում են դավաճանել իր հայ-
րենիքին և անարդ, վարձկան մի լրտես դառ-
նալ ֆաշիստական հետախուզության ձեռքում:

Հայտնի յեն նաև այլ զեպքեր, յերբ լրտես-
ներն իրենց ցանցի մեջ են ներգրավել արտա-
սահման գնացող մարդկանց, ոգտվելով նրանց
բարոլական անկայունությունից: Այսպես, որի-
նակ, արտասահման գործուղած մի աշխատող,
պաշտոնական փոխհարաբերությունների կար-
գով, ծանոթանում ե ոտարերկրյա հյուպատոսու-
թյունների մի շարք պաշտոնյաների հետ: Նրան-
ցից մեկն իրեն ցուց տալով վորպես ունեվոր
մարդ, հաճախ քաղաքացի «Տ» ին հրավիրելիս և
լինում զանազան զվարճատեղիներ — Ճիարշավ-
ներ, թատրոններ, շանտաններ, կաբարեներ և
այլն: Ըստ վորում ոտարերկրացին միշտ առիթ
ե վորոնում ինքը վճարելու այն բոլոր ժամանց-
ների համար, վորոնցից ոգտավում եր «Տ»-ի հետ-
միասին: Այդպիսով «Տ»-ն սկսում ե սիստեմա-
տիկաբար ժամանակ անցկացնել իր նոր, առա-
տաձեռն ծանոթի հետ, այցելում ե զանազան
զվարճատեղիներ, ներգրավվում ե ուրախ կյան-
քի մեջ: Բայց մի գեղեցիկ որ «բարերարը»
հայտնում ե «Տ»-ին, վոր ինքը սնանկացնել ե,
վոր նրանցից պահանջում են անմիջապես վճարել
հաշիվները, ուստի ինքը խնդրում ե վերացքարձ-
նել իրենց համատեղ ժամանցների ու կերու-
խունների ընթացքում «Տ»-ի վրա կատարած իր-

բոլոր ծախսերը, Յերբ «Տ»-ն իմանում ե պահանջվող գումարի չափը, շշմում ե, վորովհետեւ ինքը յերբեք այդպիսի խոշոր գումարներ չեր ծախսել ոտարերկրացու հետ Բայց ոտարերկրացին պնդում ե անմիջապես վճարել կատարված ծախսերը, Բնական ե, վոր «Տ»-ն վոչ մի տեղից չեր կարող այդպիսի մեծ գումար ձեռք բերել, և ահա նրա բաժակակիցն առաջարկում ե դրությունից ազատվելու յելքը, վորը կարող ե փրկել նրանց յերկուսին ել. Աւսինքն՝ անհրաժեշտ ե, վոր «Տ»-ն մի շարք համեստ ինֆորմացիաներից կարող ե առևտրական ոգուտ կորզել: Յերբ «Տ»-ն հրաժարվում ե այդ բանից, նրա «բարեկամն» սկսում ե սպառնալ, թե ինքն անմիջապես «Տ»-ի պետին կհայտնի նրա անբարոյականության, իրենց բոլոր համատեղ արկածների մասին, ի դեպ նաև այն դադարնի տվյալների մասին, վոր «Տ»-ն իրը թե արդեն գուրս ե տվել: «Չեզ համար ավելի լավ չի լինի արդյոք տալ այդ անվաս ինֆորմացիան, — հայտարարում ե լրտեսը «Տ»-ին, — քան թե ոխսի յենթարկել ձեր բարի անունը, իսկ գուցե և կյանքը, ինչպես նաև ոխսի յենթարկել ձեր ընտանիքի բախտը, վորը կարող ե կատարելապես քայլայվել, քանի վոր ձեր կինը ձեր անբարոյական արկածների համար: Ավելի լավ չեզ արդյոք մոռացության տալ ամբողջ կատարվածը՝ իմ բարեկամին վորոշ տեղեկություններ հաղորդելու գնով, վորոնց հրապարակումը

վոչ վորի վորեւե վասա չի հասցնում»: Իր մեջ արիություն չգտնելով խոստովանելու ընկերների առջև իր անթույլատրելի վարմութքը, թշնամի շրջապատի հետ իր հաստատած բարեկամությունը, և այդպիսով իսկ իրեն պաշտպանելու հետագա անկումից, «Տ»-ն ստորագրություն ե տալիս, վոր համաձայն ե հաղորդելու խնդրվող տեղեկությունները, դրա փոխարեն իր ծանոթից ստանալով վոչինչ շնչանակող մի ստորագրություն, վորով վերջինս պարտավորվում ե վոչ մի դրամ չպահանջել և շանտաժի չենթարկել նրան: Իսկ «Տ»-ի վերջը յեղավ այն, վոր նա վոր ձեց իր նոր տերերի պահանջով գողանալ մի գաղանի փաստաթուղթի այլ վորձի վրա ել բռնվեց:

Հայտնի յե մի դեպք, յերբ գերմանական հետախուզությունը փորձել ե արտասահման գործուղված Խորհրդային քաղաքացյոււն կիրառել հավաքագրման հետևյալ անշնորը պրիումը: Արտասահման մեկնած խորհրդային քաղաքացյին իր համար բնակարան ե վորոնում: Նա նայում է, միքանի շենքեր և վերջապես ընտրում մի սենյակ, վորը վարձով եր տալիս տարիքով մի կին: Տնատիրոջ հետ նրա ունեցած զբույցին կիրկա յե լինում մի յերիտասարդ աղջիկ, վորը ներկայանում ե վորպես տնատիրոջ ծանոթը: Բնակարանի տիրոջ հետ խօսելով սենյակը վարձելու պայմանների մասին, ընկերը պարմանագրվում ե յերկու որից հանդիպել՝ վերջնական վորվում ե յերկու որից հանդիպել՝ վերջնական բանակցությունների համար: Յեվ ահա նշանակված բանակցությունների համար իր ընտրած բնակարանը, նա ժամանակ գալով իր ընտրած բնակարանը,

այնտեղ հանդիպում ե նույն բնակարանատիրով՝
վորը խնդրում ե նրան մի փոքր սպասել, վորով-
հետեւ ինքն ուղում ե սենյակը վարձով տալու
մասին վերջնականապես խորհրդակցել իր ազգա-
կանների հետ, վորոնը ապրում են հարեվան
տանը: Բնակարան վարձողը հյուրասենյակում
նստած սպասում ե և ծխում: Միքանի ըռպեշից
հետո բնակարանի տերը զալիս ե վոստիկանա.
կան տեսչի և վոստիկանական վախմիստի հետ
միասին: Տեսուչը հայտնում ե, թե ինքն այդ
քաղաքացուց դիմում ե ստացել, վոր իրը առա-
ջին անգամ այցելելու և բնակարանը դիտելու
ժամանակ տանտիրուհուց գողացված ե յերկու
վոսկե մատանիք: Քանի վոր վոչ այդ ընկերոջ
այցելությունից առաջ և վոչ ել զրանից հետո
տանտիրուհու մոտ վոչ վոր չի յեկել առա-
կասկածն ընկնում ե խորհրդային քաղաքացու
վրա: Տեսուչը նրան հրավիրում ե կոմիտարիատ՝
արձանագրություն կազմելու համար: Զնայած
ընկերոջ խիստ բողոքներին, այնուամենայնիվ
նա ստիպված ե լինում զնալ վոստիկանատուն,
վորտեղ նրան յենթարկում են ստորացուցիչ
հարցաքննության և նույնիսկ փորձում են խու-
զարկել: Յերբ տեսուչը համոզվում ե, վոր մեղա-
դրյալը լուրջ մտադրություն ունի ընդդիմանա-
լու խուզարկությանը, նա հանկարծակի անցնում
ե սիրալիու տոնի և ասում: «Հետարակոր ե, վոր
քաղաքացին հանցավոր ել չի լինի այս գործում,
բայց մեղաղանքներն ակնբախ են, և ինքը
պարտավոր ե քաղաքացուն խուզարկության

յենթարկել, կամ թե արձանագրություն կազմել
և գործը հանձնել դատախազությանը, իսկ մինչև
գործի քննությունն անհրաժեշտ կլինի նրան
պահել: Բայց քանի վոր ինքը՝ տեսուչը հասկա-
նում ե, թե դա ինչպիսի խայտառակ գործ ե
հարգելի պարոնի համար, ուստի պատրաստ ե
մի փոքր գումարով «անախորժությունները ծած-
կել», սքողել ամբողջ գործը և «գողին» ազատ
բաց թողնելու: Դժբախտաբար ընկերը ձգտում ե
գորքան կարելի յե շուտառվ դուրս գալ այն ան-
հարմար զրությունից, վորի մեջ ընկել եր, և
առանց մտածելու հետեանքների մասին՝ նանում
ե դրամապանակն ու տեսչի սեղանի վրա
զնում 20 մարկ: Հենց այդ ըռպեյին դուռը բաց-
վում ե և ներս մտնում լավ, բայց համեստ հագ-
նը ված մի յերիտասարդ, բացահայտորեն սպայի
տեսքով, բայց քաղաքացիական հագուստով: Ներս
մտնողը հայտարարում ե, վոր հարեվան սեն-
յակում գտնվելով՝ ինքը լսել ե, թե ինչպես
ձերբակալվածը կաշառք եր խոստանում վոստի-
կանական տեսչին: Վորպես ավագ, ինքը պետք
ե արձանագրություն կազմի այդ մասին: Տեսչին
հարց ու փորձ անելով խորհրդային քաղաքացու
ձերբակալման դպաւճառի մասին, սպան հայտա-
րարում ե, թե կաշառք տալլ ձերբակալվածի հան-
ցագործության ուղղակի ապացուցն ե հանդիսա-
նում և պահանջում ե անմիջապես արձանագրու-
թյուն կազմել, մատնանշելով, վոր ձերբակալվածը
փորձել ե ազատվել կաշառք տալու միջոցով:
իսկ ձերբակալվածին սպան հրամայում ե անմի-

ջապես ուղարկել բանա: Յերբ արձանագրությունն արդեն կազմված ե լինում, իսկ ձերբակալվածը հրաժարվում ե այն ստորագրելուց, սպան դուքս ուղարկելով տեսչին և մենակ մնալով ձերբակալվածի հետ, հայտարարում ե, վորինքը հականեաւախուզության սպա յե և հսկում ե վոստիկանության գործունեյությանը, վորինքը կատարելապես հասկանում ե կատարված դեպքի ամբողջ խայտառակությունը և պատրաստ ե ոգնելու դժբախտության մեջ ընկած խորհրդային քաղաքացուն: Սակայն նա չի կարող այդ բանն անել առանց վորեն ծառայության: Տվյալ դեպքում նրա առաջարկը հանգում ե այն բանին, վոր խորհրդային քաղաքացին փոխադարձ ծառայություն մատուցեր նրան, այսինքն տեղեկություն հաղորդեր մեկ այլ մարդու, նույնպես խորհրդային քաղաքացու մասին, վորն ապրում է իր հայրենիքում: Մեր միամիտը, վոչինչ չկառակածելով, իր ծոցատերի մեջ գրում ե մատնանշված ազգանունն ու հասցեն, ապա սպայի խնդրով նրա ծոցատերի մեջ նույնպես, իր սեփական ձեռքով, գրում ե նույն այդ ազգանունը ուստերեն լեզվով: Այնուհետեւ ինքն իր մեջ մտածելով, վոր բոլորովին եժան ե պրծել, հականետախուզության սպայի միջնորդությամբ գուրս ե գալիս վոստիկանատնից և ուղեվորվում: տուն:

Ճանապարհին մեր ծանոթը յերկար մտածում ե կատարվածի մասին, կշռադատում, թե ինքը պետք ե արդյոք այդ բանը պատմի ընկերներին. բայց վախենալով, վոր կարող են իր վըա

ծիծաղել, նա պատահածի մասին վոչ-վոքի վոչինչ չի ասում և աշխատում ե մոռացության տալ այն: Սակայն 15 որից հետո հեռախոսով զանգահարում են նրան՝ իր բնակարանում, հայտնելով, վոր նրա հետ ցանկանում ե տեսակցել հականետախուզության սպան՝ նրան հայտնի գործի վերաբերյալ բանակցելու համար: Միայն հեռախոսային զանգահարությունից հետո նա հասկանում ե, թե ինչ հոտ ե փշում այդ գործից: Նա վորոշում ե կատարվածի մասին անմիջապես զեկուցել իր պետին և դրանով իսկ փրկում ե իրեն կործանումից, վորն անխուսափելիորեն սպասում եր նրան, հականետախուզության հորինած այդ լկոի կատակերգության ձգձգման զեպքում: Յերբ հետախուզության գործակալն սկսում ե սեղմել և սպառնալ, թե կմերկացնի նրան, մերը ընկերն շատապ փակում ե նրա բերանը, հայտարարելով, վոր ինքն ամեն ինչ գեկուցել ե իր պետին և հականետախուզությունը պետք ե հաշվի առնիվ խորհրդային քաղաքացիների նկատմամբ թույլ տրված ստոր լրտեսական յեղանակների դեմ արվող բողոքը: Հականետախուզությունը յերկար ժամանակ գեռ չեր հանգստանում, չցանկանալով ձեռքից բաց թողնել նշված գոհին, փորձելով գործադրել վախեցնելու նոր մեթոդներ: Բայց շնորհիվ խորհրդային քաղաքացու ուղիղ ու ազնիվ դիրքի, այդ գործից վոչինչ դուրս չի գալիս:

Այս որինակները միայն մօսամբ են բաց անում այն կեղառա, լկոի պրիոմների վարա-

կույրը, վորոնք գործադրվում են ոտարերկրյա, հատկապես ֆաշիստական հետախուզությունների կողմից՝ բոկորովին անմեղ մարդկանց իրենց լրտեսական ցանցի մեջ ներգրավելու համար։ Ուղղամտությունը, աղնվությունը խորհրդային պետության հանդեպ, իր հայրենիքի նկատմամբ ունեցած պարտքի գիտակցումը, զգաստությունը, հանձնարարված գործի բարեխիղճ կատարումը, ինքնավերահսկողությունը պետք և յուրաքանչյուր խորհրդային քաղաքացուն պաշտպանեն թշնամիների այդ լկտի դաշինքից։

Իրենց լրտեսական աշխատանքում ոգտագործելով ամենաակեղոտոտ մեթոդներ, ֆաշիստական հետախուզությունները հասկանում են, վոր իրենց կիրառած մեթոդները կարող են ոգտագործել նաև ուրիշ բուրժուական հետախուզություններ և նույն չափով կարող են կիրառվել իրենց դեմ։ Իրենց հաղատակներին վորոշ դիմադրողականություն պատվաստելու համար ֆաշիստներն իրար հետևից արտադրում են կինոնկարներ, վորոնց նպատակն ե ծանոթացնել ոտարերկրյա հետախուզությունների մեթոդների և պրիմների հետ։ Լայնորեն ոեկամում են այնպիսի նկարները, ինչպես «Մատա Խարիո»-ն (գերմանական հայտնի լրտեսուհի Փարիզում) «Պորտ-Օբառուր»-ը, «Նատաշա»-ն, «Մատնիչը» Վերջին չարում ցույց են արված ոտարերկրյա պետությունների լրտեսների աշխատանքը Գերմանիայի տերիտորիայում։ Այդ նկարում առանձնապես շեշտված ե, թե ինչպես գերմանական սավա-

նորդը, խճճվելով լրտեսների ցանցում, ուժ ե գտնում իր մեջ, չվախենալով սարքովի թխվածու իրեն մերկացնող փաստաթղթերից, բոլորի մասին պատմել իր պետին, վորի համար վերջին հաշվով պարզեատրվում ե շարքի առաջ շնորհակալությամբ։ Մյուս կողմից, ֆաշիստներն ամեն կերպ իղեալականացնում են իրենց լրտեսներին։ Մինչև ուղն ու ծուծը կեղծ մի ամբողջ սերիա գրականություն և ստեղծվել նրանց սխրագործությունների մասին։

Այդ բոլորը հետապնդում ե յերիտասարդությանը լրտեսական օռոմանտիկայի» մեջ զրավելու նպատակը։ Ֆաշիստական այդ «օռոմանտիկների» հիմնական կադրերը պատրաստվում են ոտարերկրյա պետությունների դեմ աշխատելու համար։ Նրանց գիտավորությունն ե՝ խցկվել թափթթվության, անհոգության և զգաստության բթացման անցքերից՝ սպանությունների, դիվերսիաների և լրտեսության իրենց նողկալի գործը կատարելու համար։

Իր ֆունկցիաները կատարելու համար լրտեսությունն ունի հզոր ապարատ, վորն ոգտագործում ե հարեան պետությունների որգանիզմի մեջ և արեան պատերազմական և այժմյան նախապատերազմական պատերազմի վորձը, հետպատերազմյան և այժմյան նախապատերազմյան շրջանը, չնայած գաղտնիքի վարագույրին, վորով միշտ քողարկվում ե լրտեսական աշխատանքը, տալիս ե լրտեսական գործունեյության լայն թափի մեծ քանակությամբ փաստեր։ Լըր-

4068

տեսությունն իր շոշափութիները տարածում ե դեպի պետական հիմնարկությունները, պաշտպանական նշանակություն ունեցող խոշոր ձեռնարկությունները, տրանսպորտը, նպատակ ունենալով թափանցել պետական գաղտնիքները, հարցու փորձով տեղեկանալ պաշտպանական գաղտնիքների մասին, բաց անել տեխնիկական կատարելագործությունները, կարևորագույն պաշտոններում նստեցնել իրենց մարդկանց ու կազմակերպել մասսարարություն, դիվերսիա և դավաճանություն։ Լրտեսությունը—դա մի չընդհատվող գաղտնի պատերազմ է, վորի վարողը լրտեսների բանակն է, և վորը վոչ մի բոպե չի դադարում։ Այս են վկայում այն բազմաթիվ դռնփակ դատական պրոցեսները, վորոնք վերջին ժամանակները տեղի ունեն Այերիկայում, Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմ. Սովորակիայում, Ռումինիայում, Իսպանիայում։



Ответственный по выпуску В. Г. Потекян
Тех. редактор Д. М. Джинибалаян

Уполномоченный № О-3334. Сдано в набор 28 мая 1937 г.
Подписано в печать 31 мая 1937 г. Об'ем 21½ п. л.
Тираж 2500. Заказ № 972.

Типография Краевого Армянского Из-ва „БОЛЬШЕВИК“
Ростов-Дон, Ворошиловский пр. № 27.

«Ազգային գրադարան»



NL0199648

6164

ԳԻՐԸ 30 ԿՈՊ.
Цена 30 коп.

На армянском языке

С. УРАНОВ

О некоторых коварных приемах вербовочной работы иностранных разведок

АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ
КРАЕВОЕ АРМЯНСКОЕ
ИЗДАТЕЛЬСТВО „БОЛЬШЕВИК“
Ростов-Д, Ворошиловский пр. № 27